«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

«NEW GENERATION» HUMANITARIAN NGO

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ

18 ՀՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ 2016

Սույն ամսագիրը լույս է տեսնում յուրաքանչյուր ամիս և արտացոլում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

Հայաստան 0019, ք.Երևան, Բաղրամյան 49, բն. 7
Apt.7, 49 Baghramyan str. Yerevan 0019, Armenia

+374 60 378989
+374 60 478989

newgenerationngngo@gmail.com
http://ngngo.net/

«ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ, ԵԹԵ ԿԱ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ» ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

2016թ-ի հուլիսի 8-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ «Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագրի շնորհանդեսը: Շնորհանդեսի ընթացքում ներկայացվեցին ծրագրի մանրամասները, և ստեղծվեց համագործակցություն նաև ոլորտի այլ կառույցների ու անհատների հետ: Ծրագրի թիրախային խմբերն են տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ և տրանսգենդեր անձիք:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են թիրախային համայնքների կարիքների գնահատում և շահերի պաշտպանության միջոցառումներ՝ ուղղված թիրախային խմբերի ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության դյուրացմանը:

Հայաստանում ծրագիրը իրականացնելու են «Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-երը:

«Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագիրը, իրականացվում է Վնասի Նվազեցման Եվրասիական Ցանցի, Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցի կողմից:

«ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱԿԱԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ» ԾՐԱԳՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

2016 թվականի հուլիսի 8-10-ը Երևանում տեղի ունեցավ «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության, Վրաստանի «Դռոնի» երիտասարդական ասոցիացիայի հետ համատեղ եռօրյա սեմինար-դասընթացը՝ «Երիտասարդությունը խտրականության դեմ» թեմայով՝ «Փոքրամասնութուն կազմող երիտասարդների քաղաքացիական ակտիվության զարգացումը և նրանց ներգրավումը քաղաքացիական որոշումների գործընթացների մեջ» ծրագրի շրջանակներում: Հայաստանում անցկացվող ծրագիրը հանդիսանում է Եվրոպական երիտասարդական ֆոնդի կողմից Փոքրամասնությունների երիտասարդների եվրոպական ցանցի միջոցներով ֆինանսավորվող ծրագրի երկրորդ-երրորդ փուլը: Սեմինար-դաընթացի մասնակիցները հանդիպման առաջին օրը ուսումնասիրեցին՝ հավասարությունը և հակախտրականությունը որպես

հասարակական կյանքում փոքրամասնություն կազմող երիտասարդների որոշումների կայացման գործընթացների լիարժեք հիմք թեման: Օրվա 2-րդ կեսին մասնակիցները այցելեցին Սպորտի և Երիտասարդության հարցերով նախարարություն, որտեղ ծանոթացան նախարարության երիտասարդական վարչության աշխատանքներին ու նպատակներին: Բավականին բուռն քննարկման ժամանակ մասնակիցները համապատասխան վարչության պետից ցանկանում էին տեղեկանալ հիմնականում այն ծրագրերի մասին, որը նախարարությունը իրականացնում է եվրոպական երկրների հետ: Մասնակիցները նախարարության աշխատակցից

հետաքրքրվեցին նաև վերջին մի քանի տարիների ընթացքում նախարարության կողմից խտրականության վերաբերյալ իրականացված ծրագրերից:

Հանդիպման 2-րդ օրը մասնակիցները ուսումնասիրեցին քաղաքացիական կյանքում և որոշումների կայացման գործընթացում փոքրամասնություն կազմող երիտասարդների մասնակցության կարևորությանը: Ինտերակտիվ մեթոդով ու տարբեր բեմադրություններով (ֆորում թատրոն), մասնակիցները բարձրացնում էին այնպիսի թեմաներ, որոնք հնարավորություն էին տալիս խնդրին ավելի մոտիկից ծանոթանալ: 2-րդ օրվա կարևոր թեմաներից էր՝ խտրականության արգելքը որպես մարդու իրավունքների հավասար պաշտպանության երաշխիք: Այս թեմայի շուրջ մասնակիցները ուսումնասիրում էին Հայաստանում ու Վրաստանում առկա խտրականության տեսակներն ու հիմնական զոհերին: Տարբեր թեզերի միջոցով մասնակիցները ծանոթացան միջազգային փորձին, որի միջոցով էլ զարգացրեցին այն հմտությունները, որոնք ձեռք են բերել խտրականության կանխարգելման գործում: Հանդիպման 3-րդ օրը «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության նախագահ Սերգեյ Գաբրիելյանը մասնակիցներին ծանոթացրեց ծրագիր գրելու և դրամաշնորհային ծրագրերին դիմելու առանձնահատկություններին: Դասընթացի ժամանակ ստացած գիտելիքները երիտասարդները օգտագործեցին օրվա ավարտին ու ներկայացրեցին 4 տարբեր ծրագրեր: Հայաստանի ու Վրատանի երիտասարդների կազմած խմբերի ուշադրության կենտրոնում հիմնականում ընտանեկան ու սեռական փոքրամասնությունների հանդեպ իրականացվող բռնություններն էին: Սեմինարի ավարտին մասնակիցները «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության կողմից ստացան փոքր դրամաշնորհներ իրենց գաղափարները իրականացնելու համար: Ոչ ֆորմալ տարբերակում էլ ստացան մասնակցությունը հաստատող վկայականներ:

«ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑՈՒՄ»

Մարդկային ռեսուրսների կառավարում, մոբիլիզացում, մոբիլիզացման մեխանիզմներ, դերեր և պարտավորություններ ու ֆոնդերի քարտեզագրում՝ սրանք այն թեմաներն են, որոնք ուսումնասիրել են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող ծրագրի մասնակից կազմակերպությունները հուլիսի 12-13-ը տեղի ունեցած դասընթացի ժամանակ: Ծրագիրն ուղղված է այն հասարակական կազմակերպություններին, որոնք տրամադրում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի շրջանակներում բուժօգնություն եւ աջակցություն, եւ/կամ աշխատում են թմրամիջոցներ օգտագործողների եւ այն տղամարդկանց հետ, որոնք սեռական հարաբերություն են ունենում այլ տղամարդկանց հետ: Դասընթացին մասնակցել են նաև «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպության աշխատակիցները: Նրանք ուսումնասիրել են ուսումնասիրվող թեմայի այն բոլոր խնդիրները, որոնք առկան են Հայաստանում և ունեն հստակ կառավարման անհրաժեշտություն:

ԴԱՍԸՆԹԱՑ ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՆԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ 11 ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՐ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպված «Խոցելի խմբերի հիմնախնդիրների իրազեկում և խտրականության արգելք» թեմայով եռօրյա դասընթացը նախատեսված է եղել Երևանի տարածքային զինվորական կոմիսարիատների 11 ներկայացուցիչների համար: Դասընթացը իրականացվում է Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

Երեք օրերի ընթացքում մասնակիցները քննարկել են մարդու իրավունքների հասկացությունները, սահմանումները, պատմությունը, սերունդները, ծանոթացել են միջազգային և ներպետական իրավունքին, միջազգային իրավական պայմանագրերին, ուսումնասիրել են խտրականության տեսակները, խտրականության արգելքով պաշտպանված հիմքերը, ծանոթացել են պետության պարտավորություններին խտրականության դեմ պայքարում: Նաև քննարկել են Զինված ուժերում խոցելի խմբերի, մասնավորապես կրոնական, սեռական, էթնիկ ու լեզվական փոքրամասնությունների և կանանց իրավունքների խախտումների հիմնական պատճառները և կանխարգելման միջոցները:

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Արթուր Մակարյանը տեղեկացրեց, որ զորամասերում առկա է խտրականություն, որը դրսևորվում է այս կամ այն կերպ: Արթուր Մակարյանի խոսքով նույնիսկ այսպես կոչված «հայրական ապտակը» անընդունելի է, որը առկա է զորամասերում ու հաճախ է կիրառվում:

Դասընթացի վերջին օրը մասնակիցները դասընթացի ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա առանձնացրել են մեր իրականության մեջ առկա խտրականության դրսևորումները ու այն հիմնական ոլորտները, որտեղ ամենաշատն է հանդիպում այդ երևույթը: Ըստ Երևանի տարածքային զինվորական կոմիսարիատների աշխատակիցների՝ խտրականություն առկա է ուժային կառույցներում, կրթական, սպասարկման և դատական համակարգերում: Խոսելով պառճառների մասին՝ նրանք առանձնացրել են կարծրատիպերը, ցածր իրավագիտակցությունը, պետական կամքի բացակայությունը, օրենսդրական բացերը: Որպես վերջինիս դեմ պայքարի միջոցները՝ մասնակիցները կարևորել են օրենքի կիրառման նկատմամբ վերահսկումը և իրազակման միջոցառումների ավելի հաճախ կազմակերպումը:

Հիշեցնենք, որ մինչ այժմ նշված դասընթացը կազմակերպվել է իրավաբանների, փաստաբանների, իրավապաշտպանների, լրագրողների, Քրեակատարողական վարչության և հիմնարկների, ինչպես նաև հոգեբուժական կենտրոնների 11-ական ներկայացուցիչների համար, որոնք ընտրված են եղել ՀՀ տասը մարզերից և Երևանից:

«ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ»

Մեկնարկել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից «Մարդու իրավունքները հանունբազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում իրականացվող «Մարդու իրավունքներ,հանդուրժողականություն և խտրականության արգելք» թեմայով եռօրյա դասընթացը, որի նպատակն է բարձրացնել Արմավիրի մարզի ակտիվ երիտասարդների, պետական և հասարակական կառույցների ներկայացուցիչների և լրագրողների իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների, հանդուրժողականության, խտրականության, խոսքի ազատության և ատելության խոսքի վերաբերյալ:

Ծրագրի համակարող Նարե Հովհաննիսյանը վստահեցնում է, որ նման դասընթացների միջոցով աշխարհը դառնում է ավելի լավը, մարդիկ՝ հանդուժող: Նրա խոսքով իրավական հասարակությունը ժողովրդավար պետության հիմքն է: Ծրագրի համակարգողը վերջում ավելացրեց, որ

թեմաները, որոնք քննարկվել են առաջին օրը, նախապես մշակվել է «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի իրավաբանական բաժինը ու հաստատվել կազմակերպության նախագահի կողմից:

Մասնակիցները դաընթացի առաջին օրը ծանոթացան մարդու իրավունքների համընդհանուր հասկացությանըև պատմությանը, ՄԱԿ-ի գործունեությանը և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերին, Եվրոպական միության և Եվրոպայի խորհուրդի գործունեությանը: Դասընթացն ուղեկցվում է ինտերակտիվ խաղերով ու քննարկումներով: Խմբային աշխատանքների միջոցով էլ մասնակիցները ներկայացնում են Մարդու իրավունքներիհամընդհանուր հռչակագիրն ու եվրոպական կոնվենցիան իրենց պատկերացմամբ ու քննարկում դրանց դրական ու բացասական կողմերը:

«ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ, ԵԹԵ ԿԱ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ» ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագրի շրջանակում ստեղծված համապատասխան խմբի հիմնական ուշադրության կենտրոնում էր սեռական փոքրամասնություններին հասանելի ապրանքները, ծառայությունների տրամադրումը:

Հանդիպման առաջին օրը ծրագիրը ներկայացնելուց հետո ֆասիլիտատորները մասնակիցներին հետ միասին մշակեցին հանդիպումների անցկացման կանոնները: Տարբեր խաղերի ու քննարկումների միջոցով մասնակիցները քննարկեցին այն հարցերը որոնք առկա են տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդկանց շրջանում:

Հանդիպման ժամանակ մասնակիցները առանձնացրեցին՝ Կյանքի և առողջության պահպանման, ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող վիրուսի կանխարգելման, ՄԻԱՎ-ի հետազոտության, ՄԻԱՎ-ի բուժման, Վիրուսների կասեցման բարենպաստ պայմանները ու խոչընդոտները:

Հիշեցնենք, որ ծրագրի թիրախային խմբեր են հանդիսանում տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ և տրանսգենդեր անձիք: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել թիրախային համայնքների կարիքների գնահատում և շահերի պաշտպանության միջոցառումներ՝ ուղղված թիրախային խմբերի ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության դյուրացմանը:

Հայաստանում ծրագիրը իրականացնելու են «Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ները: «Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագիրը, իրականացվում է Վնասի Նվազեցման Եվրասիական Ցանցի, Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցի կողմից:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԼԻՆԵՆ» ԴԱՍԸՆԹԱՑ ԱՐՄԱՎԻՐՈՒՄ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից «Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի շրջանակներում իրականացվող «Մարդու իրավունքներ, հանդուրժողականություն և խտրականության արգելք» թեմայով եռօրյա դասընթացը ավարտվեց: Երեք օրերի ընթացքում մասնակիցները ծանոթացել են մարդու իրավունքներին, խոսքի ազատությանը, ատելության խոսքին և խտրականության արգելքին: Մասնակիցները, խոսելով խոսքի ազատության մասին, միաձայն համաձայնել են, որ բազմակարծությունը ժողովրդավարական հասարակության հիմնաքարն է: Դասընթացի նպատակն էր բարձրացնել Արմավիրի մարզի ակտիվ երիտասարդների, պետական և հասարակական կառույցների ներկայացուցիչների և լրագրողների իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների, հանդուրժողականության, խտրականության, խոսքի ազատության և ատելության խոսքի վերաբերյալ: Այն ուղեկցվում էր ինտերակտիվ խաղերով, քննարկումներով և դերային խաղերով:

Ծրագրի փորձագետ Հայկուհի Հարությունյանը տեղեկացրեց, որ հատկապես մարզերի երիտասարդների հետ պետք է աշխատել անընդհատ, որպեսզի լրացվի այն բացը, որը առկա է: Նրա խոսքով անհանդուրժողականության դեմ կարելի է պայքարել միայն մտքի հեղափոխությունից հետո:

-Զարգացած երկրների պատմությունը վկայում է, որ ժողովրդավարական զարգացումներն եւ այդ նպատակով նախաձեռնված հեղափոխությունները անխուսափելիորեն հաջողությամբ են մկրտվել մտքի հեղափոխության շնորհիվ: Ուժը, զենքը, բռնությունը ժամանակավորապես կարողացել են ճնշել հասարակությանը, բայց ժողովրդի մտքի ու մտածողության փոփոխությունը կարողացել է նվաճել նույնիսկ ամենատոտալ իշխանությունը: Մենք այսօր զենք չենք վերցնում ու փողոց դուրս չենք գալիս, բայց փորձում ենք ձևավորել մտքի հեղափոխության միջավայր, որտեղ մարդը գիտակցում և ապավինում է իր ուժին՝որպես հասարակության լիիրավ անդամ ու իր պետության լիարժեք քաղաքացի:

Իհարկե, սա անհավանականորեն դժվար ու երկարաժամկետ աշխատանք է և կարող է արդյունք տալ միայն հետևողականության շնորհիվ: Իմ և ինձնից ցանկացած հատկանիշով տարբերվող նույն հասարակության մեկ այլ անդամի միջև տարբերություն դնելը, նրան այլ, տարբերակված ու խտրական վերաբերմունքի ենթարկելը, կարծում եմ, մեր հասարակության խնդիրներից մեկն է: Դա հասարակության ուշադրությունը շեղում և ապակենտրոնացնում է իրական ու առարկայական խնդիրներից, որոնք պետք է տեղ զբաղեցնեն հանրային օրակարգում: Նման մտածելակերպի փոփոխությունը, անշուշտ, կհանգեցնի հասարակության մեջ

ոչ թե պատրանքային, այլ իրական խնդիրների լուծման նկատմամբ պահանջատիրության ձևավորմանը և դրանց լուծման համար պատասխանատվության ստանձնմանը: Մեզ խիստ անհրաժեշտ է մտքի հեղափոխություն, և այդ ուղղությամբ ցանկացած ներդրում ու օժանդակություն ավելի քան ողջունելի և գնահատելի են: Եթե մեր նախաձեռնությունների զարգացմանն ուղղված նման ջանքերն ու օժանդակությունը շարունակվեն, մենք անշուշտ կնվաճենք իրական ժողովրդավորությունն ու կկառուցենք իրավական երկիր մտքի հեղափոխությամբ:

«Մարդու իրավունքները հանուն բազմազանության և հավասարության» ծրագրի մյուս փորձագետ Արթուր Մակարյանն էլ տեղեկացրեց, որ դասընթացի ժամանակ քննարկված թեմաները առաջնային են եղել, քանի որ հենց դրանց տիրապետելով էլ մարդիկ ձգտում են ապրել ժողովրդավար պետությունում: Ամփոփելով սեմինար-դասընթացը՝ նա նշեց.

– Նմանատիպ ծրագրերի հանդեպ մեծ է հետաքրքրվածությունը հատկապես մարզերում, ինչն արտահայտվում է մասնակիցների ոգևորությամբ ու պատրաստակամությամբ: Կցանկանամ առանձնակի կերպով շեշտել, որ երիտասարդները մտածում էին ավելի լավ ժողովրդավար պետության ու կրթված հասարակության մասին, նույնը չեմ կարող ասել ավագ սերնդի մասին, որը, թերևս, կաղապարված է ոչ ժողովրդավար մտածելակերպով և դատողություններով: Մենք կարողացան կազմակերպության կողմից նախապես հաստատված թեմաների շնորհիվ դասընթացի 3-րդ օրվա ավարտին հասնել նրան, որ մասնակիցները տան մարդու իրավունքների իրենց բնորոշումը:

Ծրագրի համակարգող Նարե Հովհաննիսյանը վստահեցրեց, որ ծրագիրը կունենա շարունակություն, քանի որ կազմակերպությունը որդեգրել է քաղաքականություն, որն է կրթել ու տեղեկացնել հասարակությանը: Ամփոփելով եռօրյա սեմինարը՝ նա ընդգծեց.

– Այս դասընթացը ծրագրով նախատեսված 6-րդ մարզային հանդիպումն էր: Այս հանդիպումների հիմնական ընդհանրությունն այն է, որ մասնակիցները գործնական աշխատանքների ժամանակ օբյեկտիվորեն են գնահատում մարդու իրավունքների խախտումների և խտրականության դրսևորումների դեպքերը, սակայն իրականում դժկամությամբ են ընկալում կարծրատիպերից ու նախապաշարումներից դուրս մատուցվող մոտեցումները: Գուցե և մի փոքր դժվար էր, բայց հասանք այն ընդհանուր հայտարարին, որ բոլորս, մի կողմ թողնելով մեր սուբյեկտիվ ընկալումները, պետք է հասնենք այն ցանկալի իրականությանը, որ Հայաստանի՝ որպես իրավական պետության ներսում բոլոր մարդկանց իրավունքները պետք է պաշտպանված լինեն: Հանրային ընկալման և վերաբերմունքի փոփոխությունը հեշտ չի լինելու, ուստի մեր աշխատանքը պետք է շարունակական լինի:

«ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ, ԵԹԵ ԿԱ ՀԱՏԿԱՑՎԱԾ ԲՅՈՒՋԵ» ԾՐԱԳՐԻ 3-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ

«Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագրի շրջանակում ստեղծված համապատասխան խմբի հիմնական ուշադրության կենտրոնում է ՏՍՏ-երին և Տրանսգենդեր անձանց հասանելի ապրանքներն ու ծառայությունների տրամադրումը, դրանցից օգտվելու առավելություններն ու խոչնդոտները:

Հանդիպման 3-րդ օրը մասնակիցները համապատասխան աղյուսակում նշումների միջոցով առանձնացրեցին բոլոր այն առավելություններն ու թերությունները, որոնք հանդիպում են հետազոտությունների, ծառայությունների ու ապրանքներից օգտվելու ժամանակ:

Տարբեր խմբերից կազմած մասնակիցները քննարկել են թիրախային համայնքների կարիքների գնահատում, շահերի պաշտպանության միջոցառումներ՝ ուղղված թիրախային խմբերի ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության դյուրացմանը:

Հայաստանում ծրագիրը իրականացնում են Նոր Սերունդ Մարդասիրական և Իրավունքի Կողմ Իրավապաշտպան ՀԿ-երը:

«Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագիրը, իրականացվում է Վնասի Նվազեցման Եվրասիական Ցանցի, Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցի Ֆինանսավորմամբ:

Հիշեցնենք, որ ծրագրի թիրախային խմբեր են հանդիսանում տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ և տրանսգենդեր անձիք:

Ծրագրի շրջանակներում իրականացվելու են թիրախային համայնքների կարիքների գնահատում և շահերի պաշտպանության միջոցառումներ՝ ուղղված թիրախային խմբերի ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության դյուրացմանը:

ԼՐԱԳՐՈՂԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼԵՎՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հուլիսի 27-ին ժամը 03:30-ի սահմաններում, Երևանի Խորենացի փողոցում կայացած բազմամարդ հանրահավաքից հետո ոստիկանության Շենգավիթի բաժին է բերման ենթարկվել այդ հավաքի ակտիվ մասնակիցներից մեկը՝ Գյումրու լրագրողների

«Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ Լևոն Բարսեղյանը: Ավելի ուշ հարուցվել է քրեական գործ՝ սառը զենք կրելու կասկածանքով, եւ նա ձերբակալվել է: Բարսեղյանը ենթարկվել է դատաբժշկական փորձաքննության:

Լևոն Բարսեղյանի գտնվելու վայրը գործընկերների և հարազատների համար երկար ժամանակ անհայտ է եղել: Թեև ոստիկանությունը տեղեկացրել էր, որ նա ազատ է արձակվել առավոտյան 06:30-ին, իրականում դա ապատեղեկատվություն էր. Բարսեղյանը գտնվել է ոստիկանության հսկողության ներքո, տարվել է Գյումրու Կումայրի բաժին և կրկին բերվել Շենգավիթի քննչական բաժին: Իրավապաշտպան գործընկերների համառ գործողությունների շնորհիվ միայն օրվա երկրորդ կեսին ճշտվել է նրա որտեղ լինելը:

Բարսեղյանի նկատմամբ քրեական գործ հարուցելու հիմք է հանդիսացել նրա անձնական խուզարկությամբ՝ տաբատի գրպանից հայտնաբերված ծալովի դանակը: Նրա փաստաբանի հաղորդմամբ՝ այդ դանակն առաջին անգամ չէ, որ հայտնաբերվում է Լևոն Բարսեղյանի մոտ նմանատիպ իրավիճակներում, երբ ոստիկանությունը նրան բերման էր ենթարկում բողոքի ակցիաներից: Սակայն ամեն անգամ այդ դանակի առկայությունն արձանագրվել է և անտեսվել, քանի որ չի համապատասխանել սառը զենքի չափանիշներին:

Մենք՝ ներքոստորագրյալներս, համոզված ենք, որ մեր գործընկերոջ նկատմամբ հարուցված քրեական գործը շինծու է, իսկ իբրև սառը զենք որակված դանակի առկայության փաստը՝ ընդամենը նրա ակտիվ հասարակական գործունեության, ինչպես նաև Խորենացի փողոցում տեղի ունեցող հանրահավաքներին մասնակցելու, իսկ վերջին օրը նաև այն վարելու համար Լևոն Բարսեղյանին «պատժելու» պատրվակ է: Փաստորեն, մեր գործընկերը իրավապահ մարմինների կամայական գործողությունների թիրախավորված զոհ է դարձել քաղաքացիական դիրքորոշման համար:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ պահանջում ենք.

–Իրավապահ մարմիններից՝ անհապաղ կարճել հարուցված քրեական գործը եւ ազատ արձակել Լեւոն Բարսեղյանին,

–Իշխող քաղաքական վերնախավից՝ դադարեցնել բռնությունները ցուցարարների ու ակտիվ քաղաքացիների նկատմամբ, եւ իրավապահների գործողությունները վերադարձնել օրինական դաշտ:

- ✓ ԽՈՍՔԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
- ✓ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ ՄԵԴԻԱ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (ՆԱԽԿԻՆ «ԻՆՏԵՐՆՅՈՒՍ»)
- ✓ ԲԱՁՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ – ՀԱՅԱՍՏԱՆ
- ✓ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ
- ✓ «ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ
- ✓ «ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ
- ✓ ԳՈՐԻՍԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ
- ✓ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ-ՀԱՅԱՍՏԱՆ
- ✓ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ԿՈՄԻՏԵ
- ✓ ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ «ՀԱՆՐԱՅԻՆ ՕՐԱԿԱՐԳ» ՀԿ
- ✓ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
- ✓ «ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

Հայտարարությունը բաց է միանալու համար;

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ, ԵԹԵ ՀԱՏԿԱՑՎԱԾ Է ԲՅՈՒՋԵ» ԾՐԱԳՐԻ 3-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

«Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-երը 2 ամիս է, ինչ իրականացնում են «Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագրը: Արդեն տեղի է ունեցել 3 տարբեր խմբերից կազմված հանդիպումներ, որոնց շրջանակներում խմբերի հիմնական ուշադրության կենտրոնում են եղել SUS-ներին և տրանսգենդեր անձանց հասանելի ապրանքներն ու ծառայությունների տրամադրումը, դրանցից օգտվելու առավելություններն ու խոչնդոտները:

Հանդիպման 3-րդ օրը մասնակիցները համապատասխան աղյուսակում նշումների միջոցով առանձնացրեցին բոլոր այն առավելություններն ու թերությունները, որոնք հանդիպում են հետազոտությունների, ծառայությունների ու ապրանքներից օգտվելու ժամանակ:

3-րդ հանդիպման ժամանակ մասնակիցները առանձնացրեցին նախորդ 2 հանդիպումների ժամանակ առաջնային համարվող ապրանքներից կարևորագույնները:

Հանդիպումների ժամանակ տարբեր խմբերից կազմած մասնակիցները կատարել են թիրախային համայնքների կարիքների գնահատում, շահերի պաշտպանության միջոցառումներ՝ ուղղված թիրախային խմբերի ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության դյուրացմանը:

«Առողջությունը կարելի է գնել, եթե կա հատկացված բյուջե» ծրագիրը, իրականացվում է Վնասի Նվազեցման Եվրասիական Ցանցի, Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանցի Ֆինանսավորմամբ:

Հիշեցնենք, որ ծրագրի թիրախային խմբեր են հանդիսանում տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ և տրանսգենդեր անձիք: Ծրագրի շրջանակներում իրականացվելու են թիրախային համայնքների կարիքների գնահատում և շահերի պաշտպանության միջոցառումներ՝ ուղղված թիրախային խմբերի ՄԻԱՎ-ին առնչվող ծառայությունների հասանելիության դյուրացմանը:

ԲԱՐԵԼԱՎԵԼ ՄԻԱՎ-Ի ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աշխատակիցները Վրաստանի Բորժոմի քաղաքում մասնակցեցին «Բիզնեսի աջակցման Կենտրոնի»-ի կողմից կազմակերպված միջոցառմանը, որը միտված է բարձրացնելու ընտրված կազմակերպությունների կարողությունները: Մասնակիցները 2 օրերի ընթացքում կծանոթանան հասարակական կազմակերպությունների կապերի ամրապնդման նրբություններին, ինչպես նաև օնլայն հարթակում կատարած հաշվետվությունների ներկայացման առանձնահատկություններին ու դրանց անհրաժեշտությանը:

Կազմակերպության աշխատակիցները նախապես պատրաստած շնորհանդեսի ժամանակ տարբեր այլ կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացրեցին ՀԿ-ի գործունեությունը ՄԻԱՎ-ի կանխարգելման ոլորտում: